ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 406	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 1998.07.03/14(47)	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	26.06.1998
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	26.06.1998
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	26.06.1998
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	13.07.1998	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ 1998-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՐԱՆՑ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
26 հունիսի 1998 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 1998 թվականի N 406
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1998-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՐԱՆՑ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության 1998 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» N 242 որոշմանը համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 1998 -2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության նախարարություններին և պետական կառավարման տարածքային մարմիններին Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի իրականացման աշխատանքներում ներգրավել հասարակական կազմակերպություններին, գործատուներին և արհեստակցական միություններին:

3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման տարածքային մարմիններին՝ հաստատել Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման տարածքային ծրագրեր:

4. Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի իրականացման աշխատանքների համակարգումն ու վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության վրա:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Դարբինյան

Հաստատված է
ՀՀ կառավարության 1998 թվականի
հունիսի 26-ի N 406 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1998-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՐԱՆՑ ԴԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Հիմնական կատարողները	Կատարման ժամկետը
1	2	3	4
1.	ՀՀ կառավարություն ներկայացնել ամենամյա հաշվետվություն կանանց IV համաշխարհային համաժողովի (Պեկին, 1995 թ.) որոշումներից բխող՝ կանանց վիճակի բարելավման ուղղությամբ իրականացվող միջոցառումների մասին	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություն	ամեն տարի
2.	ՀՀ օրենսդրության գենդերային փորձաքննության անցկացում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	1998-2000 թթ.
3.	Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ դրսևորվող խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի դրույթների կատարման մասին հերթական զեկույցի նախապատրաստում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	ամեն տարի
4.	Պետական կառավարման և որոշումների ընդունման տարբեր մակարդակներում կանանց ներկայացուցչության ընդլայնման վերաբերյալ առաջարկությունների մշակում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	1998-1999 թթ.

5.	Արտերկրում ՀՀ դեսպանատներում ու ներկայացուցչություններում ղեկավար և միջին օղակներում կանանց ներգրավելու մասին առաջարկությունների մշակում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	1998-2000 թթ.
6.	Հանցագործություններից տուժած, այդ թվում՝ բռնության ենթարկված կանանց պաշտպանությունն ապահովող համապատասխան օրենսդրական դաշտի կատարելագործում	ՀՀ դատախազություն ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություն	1998-2000 թթ.
7.	Հանցավոր գործողություններից տուժած, այդ թվում՝ բռնության ենթարկված և կենսական ծայրահեղ վիճակում գտնվող կանանց սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայությունների աշխատանքների կատարելագործում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ պետական կառավարման տարածքային մարմիններ	1998-2000 թթ.
8.	Բռնության ենթարկված կանանց օգնելու նպատակով սոցիալական ծառայությունների աշխատողների ուսուցման և վերապատրաստման ծրագրերի մշակում ու իրականացում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	1998-2000 թթ.
9.	Անչափահաս, այդ թվում՝ հակահասարակական վարքագիծ ունեցող աղջիկների հետ տարվող կանխարգելիչ աշխատանքների կազմակերպում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ պետական կառավարման տարածքային մարմիններ	1998-2000 թթ.
10.	Բնակչության զբաղվածությանն աջակցող նպատակային ծրագրերի շրջանակներում կանանց զբաղվածությունն ապահովող ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն	1998-2000 թթ.
11.	Աշխատանքի շուկայում կանանց վիճակի մասին վերլուծական և տեղեկատվական նյութերի նախապատրաստում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն	ամեն տարի

12.	Կին ձեռներեցներին, ինչպես նաև ընտանեկան ձեռնարկության կազմակերպիչներին աջակցություն ցուցաբերելու նպատակով առաջարկությունների մշակում և դրանք փոքր ձեռնարկատիրական գործունեությանն աջակցման ծրագրում արտացոլում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	1998-2000 թթ.
13.	Աշխատանքի պաշտպանության նորմատիվային ակտերի պահանջների կատարման հսկողության ապահովում և ամենամյա հաշվետվության նախապատրաստում՝ աշխատող կանանց աշխատանքի պաշտպանության և աշխատանքային պայմանների հսկողության մասին	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն ՀԱՄԿ	մշտապես
14.	Աշխատող կանանց աշխատանքի պաշտպանության վերաբերյալ առաջարկություններ և համապատասխան միջոցառումների մշակում, դրանք ՀՀ կառավարության և ՀԱՄԿ-ի միջև կնքվող համաձայնագրերի նախագծերում ընդգրկում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀԱՄԿ	1998-2000 թթ.
15.	Գենդերային քաղաքականության զարգացման, կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման նպատակով կրթական համակարգում համալիր ծրագրերի մշակում և համապատասխան մասնագետների պատրաստում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն	1998-2000 թթ.
16.	Մշակույթի ոլորտի կանանց վիճակի բարելավման ծրագրի մշակում և իրականացում	ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	1998 թ.
17.	Գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներում կանանց հասարակական կազմակերպությունների մասնակցության ապահովում	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ պետական կառավարման տարածքային մարմիններ	1998-2000 թթ.

18.	Վերարտադրողական առողջության ազգային ծրագրի մշակում և իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	1998-2000 թթ.
19.	Կանանց և երեխաների բժշկական օգնության և բուժսպասարկման պետական պատվերի ծավալների ընդարձակում, այդ շրջանակներում նպատակային ծրագրերի ֆինանսավորման պետական երաշխիքների ապահովում և դրանց իրականացման մեխանիզմների տարածքային մշակում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ պետական կառավարման տարածքային մարմիններ	1998-2000 թթ.
20.	Կանանց և դեռահաս աղջիկների բժշկականխարգելիչ օգնության կազմակերպման չափանիշների մշակում և ներդրում	ՀՀ առողջապահության նախարարություն	1998-2000 թթ.
21.	Հաշմանդամ կանանց և երեխաների համար մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպման ծրագրի մշակում և իրականացում	ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն	1998-2000 թթ.
22.	Ուսանողական ընտանիքների սոցիալական աջակցման համալիր ծրագրի մշակում և իրականացում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ պետական կառավարման տարածքային մարմիններ	1998-2000 թթ.
23.	Կին փախստականների վիճակի բարելավման ծրագրի մշակում և իրականացում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	1998-2000 թթ.

24.	Կանանց սոցիալ-տնտեսական վիճակի մասին վիճակագրական տվյալների հավաքում և վերլուծություն	ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ պետական կառավարման տարածքային մարմիններ	1998-2000 թթ.
25.	«Ընտանիք, կանայք և երեխաներ» վիճակագրական տեղեկատվական տարեգրքի հրատարակում	ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն	ամեն տարի
26.	«Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական-վերլուծական տեղեկագրի հրատարակում	ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն	1998-2000 թթ.
27.	Ընտանիքի նկատմամբ իրականացվող պետական քաղաքականության հայեցակարգի մշակում	ՀՀ սոցիալական ապահովության նախարարություն	1999 թ.
28.	Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների պարբերաբար լուսաբանում մամուլում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով	ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչություն	1998-2000 թթ.